ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«03» 01 2022թ. N 02/12-1/1/2-2022

«ԱԶՈՒՌ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆ Ա.ԵՐԻՋԱՆՅԱՆԻՆ
ք. Երևան, Նորք 1-ին նրբ. 5տ

Ծանուցում

Հարգելի՛ պարոն Երիջանյան,

Միասնական սոցիալական ծառայության և «Ազուռ» ՍՊ ընկերության միջև 23.03.2021 կնքված թիվ ՍԱԾ ԳՀԱՊՁԲ-21/3-2 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում «Ազուռ» ՍՊ ընկերությունը պայմանագրով սահմանված ժամկետում՝ (Պայմանագրի թիվ 1 հավելված) Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 45 օրացուցային օրվա ընթացքում, պետք է մատակարարեր 30 հատ երկշերտ թղթե անձեռոցիկ, 12 հատ օդի հոտազերծիչ, 10 հատ մաքրող մածուկներ և փոշիներ, 10 հատ հատակի լվացման լաթ:

Պայմանագրի կողմի՝ տվյալ դեպքում վաճառողի կողմից, չեն մատակարարվել Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված վերը նշված ապրանքները:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7, 2.1.7.1 կետերը՝ Միասնական սոցիալական ծառայությունը 2021 թվականի դեկտեմբերի 29-ին միակողմանի լուծել է Միասնական սոցիալական ծառայության և «Ազուռ» ՍՊ ընկերության միջև 23.03.2021 կնքված թիվ ՍԱԾ ԳՀԱՊՁԲ-21/3-2 գնման պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացվում է, որ Պայմանագրի 6.2 կետի համաձայն «Ազուռ» ՍՊ ընկերությունը պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական թիվ 900005000758 հաշվեհամարին փոխանցել 110270 դրամ՝ որպես տույժ՝ Պայմանագրի 6.2 կետի համաձայն:

Invalid signature

X

ԱԳՆԵՍԱ ԱՂԱԲԱԲՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Signed by: AGHABABYAN AGNESA 8004770010 Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

Երևան 0010, Նալբանդյան 13, հեռ.՝ (374 60) 65 40 75
info@socservice.am , www.socservice.am